# «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության գնման պայմանագիր

**N ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04**

ք. Գավառ «13» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար ՝ Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Վի իքս Սոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Վ. Մխիթարյանին, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1728000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[19]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[19] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման խախտումը*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան [illegible] ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _4_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ 900171078299
Գլխավոր քարտուղար՝

-----------------------Ս.Խլղաթյան

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Մ.Բաղրամյան 24/6
ՀՎՀՀ՝ 02617951
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
Գործադիր տնօրեն՝

Ա.Մխիթարյան

Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օ[illegible]ասող*

*Հավելված N 1*
*«13» դեկտեմբերի 2019 թ. կնքված*
***N ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04** ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 72261160/506 | «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն՝ 330 օգտվողի համար<br>1. Օգտվողների սպասարկում բազմագիծ հեռախոսագծով սպասարկման կենտրոնով աշխատանքային օրերին եւ ժամերին (5/8),<br>2. Համակարգի ընթացիկ բոլոր թարմացումների եւ նորացումների անվճար տեղադրում, բացառությամբ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքում,<br>3. Պատվիրատուի պահանջով կատարել սերվերների օպերացիոն համակարգերի տեղադրում, համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր,<br>4. Կատարել սերվերների ծրագրային ապահովման, օպերացիոն համակարգերի թարմացում ծրագրային ապահովման աշխատանքն ապահովող բոլոր սերվերների համար,<br>5. Պատվիրատուի կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում,<br>6. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և | դրամ | 1728000 | 1 | Ք.Գավառ,Կենտրոնական հրապարակ 7 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թերությունները և բացթողումները տարանջատվում են երկու տեսակի՝<br>a. անհետաձգելի թերություններ - որոնք են համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված թերությունները, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը,<br>b. ոչ անհետաձգելի թերություններ աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպման և համակարգի առանձին մոդուլների կամ հնարավորությունների առավել հարմար, ճշգրիտ եւ արդյունավետ իրականացմանն առնչվող խնդիրները:<br>7. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված պայմաններով համակարգում մուտքագրված գրությունների տարբեր փուլերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում,<br>8. Պատվիրատուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականացման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում<br>9. Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում,<br>10. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պահուստային պատճեններից,<br>11. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում և առանձին մոդուլներում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացում,<br>12 Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում,<br>13. Պատվիրատուի պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում,<br>14. Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխություններ և լրացումներ. Համակարգի հետ աշխատող պատվիրատուի անձնակազմի տեխնիկական աջակցություն, | | | | | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ 900170[illegible]299
[illegible]՝

Ս.Խուլղաթյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՎԻ ԷՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Մ.Բաղրամյան 24/6
ՀՎՀՀ՝ 02617951
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
Գործադիր տնօրեն՝

Վ.Ս[illegible]

«ՎԻ ԷՔՍ ՍՈՖԹ» "VXSOFT" 02617951

*Հավելված N 2*
*«13» դեկտեմբերի 2019 թ. կնքված*
*N ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261160/506 | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 1728000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ 9001[illegible]
Գլխավոր քարտուղար
[illegible]

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Մ.Բաղրամյան 24/6
ՀՎՀՀ 02617951
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
Գործադիր տնօրեն՝
[illegible]
Կ.Տ.

*Հավելված 3*
*«13» դեկտեմբերի 2019 թ. կնքված*
**N** *ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ____________
հհ______________________
հվհհ____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     »«            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     »   «                    » 20      թ. դուրս գրված N ___   հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
*ազգանուն, անուն*
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
*ազգանուն, անուն*
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«13» դեկտեմբերի 2019 թ. կնքված*
**N** *ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________________
ազգանուն, անուն
____________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________________
ազգանուն, անուն
____________________________
ստորագրություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

## «13» դեկտեմբերի 2019թ. N ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 գնման պայմանագրի

**ք. Գավառ** **24.01.2020թ.**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Ս. Խլղաթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ "Պատվիրատու", մի կողմից, և «Վի իքս Սոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Վ. Մխիթարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ "Կատարող", մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ "Կողմեր", հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կողմերի միջև կնքված N ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով գնման պայմանագրի 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված N ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել գնման ժամանակացույցով՝ հավելվածով /հավելված 4/ և վճարման ժամանակացույցով՝ հավելված/հավելված 5/:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածները հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | «Վի իքս Սոֆթ» ՍՊԸ |
| ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, | ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6 |
| Կենտրոնական Հրապարակ 7 | ՀՎՀՀ 02617951 |
| ՀՎՀՀ՝ 08404767 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ՝ 1570020836060100 |
| Հ/Հ՝ 900171078299 | Գործադիր տնօրեն՝ |
| Գլխավոր քարտուղար՝ | |
| Ս. Խլղաթյան | Վ. Մխիթարյան |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 4
«13» «դեկտեմբերի» 2019թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 *ծածկագրով գնման պայմանագրի*

«ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ծառայության | | | Նախատեսվում է գնել 2020թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն | դրամ | | | 81000 | | 358000 | | 358000 | | 931000 | | 1728000 |
| Ընդամենը | | | | X | | X | | X | | X | | | 1728000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900171078299
Գլխավոր քարտուղար՝

Ա. Մխիթարյան
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**

«Վի իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
ՀՎՀՀ 02617951
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020836060100
Գործադիր տնօրեն՝

Ա. Օհանջանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 5
«13» «դեկտեմբերի» 2019թ. կնքված
ՀՀ ԳՄ ԳՀԾՁԲ-20/04 *ծածկագրով գնման պայմանագրի*

## «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ.՝ ըստ ամիսների՝ ընդ. որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | «ՄԱԼԲԵՐԻ» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն | 81000 | 81000 | 81000 | 439000 | 439000 | 439000 | 797000 | 797000 | 797000 | 1728000 | 1728000 | 1728000 | 1728000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900171078299
Գլխավոր քարտուղար՝

_____ [illegible]ղյան
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**

«Վի իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
ՀՎՀՀ 02617951
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020836060100
Գործադիր տնօրեն՝

_____ Վ. Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ.